## «Միասնություն» առաջնորդների կրթական կենտրոն ՀԿ

## «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդնում, մշտադիտարկում Կապան համայնքում» ծրագիր

### Առաջարկություններ Կապան համայնքի 2018-2023թթ. հնգամյա զարգացման ծրագրում նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրման մասին

2019 թ հունվարի 08-ից հունիսի 30-ը«Միասնություն» առաջնորդների կրթական կենտրոն ՀԿ-ն Կապան համայնքում իրականացրեց «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդնում, մշտադիտարկում Կապան համայնքում» ծրագիրը:

Ծրագրի նպատակն էր նպաստել ՀՀ կառավարության ընդունած 2019-2021թթ.-ի պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի իրականացման մասին որոշման ներդրմանը՝ իրականացնելով մոնիտորինգ Կապան համայնքում: Մոնիտորինգը նպաստեց նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների վերաբերյալ իրազեկվածության ապահովում ինչպես Կապան քաղաքում, այնպես էլ Կապան խոշորացված համայնքի բնակավայրերում, քանի որ Կապան խոշորացված համայնքի 31 գյուղական բնակավայրերից միայն 5-ում են գործում նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Մյուս գյուղական բնակավայրերում նախադպրոցական հասակի երեխաների համար հասանելի չէ որևէ նախադպրոցական կրթական ծառայություն:

Ծրագրի մեկնարկը տրվեց համաձայն Կապանի համայնքապետարանի հետ ձեռք բերված փոխհամաձայնության :

Ծրագրի շրջանակներում կազմակերպվեց այցելություններ և ուսումնասիրություններ Կապան քաղաքի 13 ՆՈՒՀ-երում և Կապան համայնքի Ճակատեն, Շիկահող ,Մրաշեն, Ծավ, Աճանան, Վերին Խոտանան, Նորաշենիկ, Վաչագան , Գեղանուշ, Վարդավանք գյուղերում: Ուսումնասիրությունների արդյունքում համագործակցելով Կապանի համայնքապետարանի հետ, հանդիպումների արդյունքում պարզեցինք այն գյուղական բնակավայրերը , որտեղ կարիք կա ներդնելու նախադպրոցական այլընտարանքային ծախսարդյունավետ մոդելներով գործող նախակրթարաններ՝ հաշվի առնելով տվյալ բնակավայրի հնարավորությունները: Ծրագրի շրջանակում, ուսումնասիրությունների ընթացքում պարզեցինք, որ նախադպրոցական կրթական ծառայությունները հասանելի և մատչելի են հիմնականում Կապան քաղաքում ապրող

երեխաների համար, իսկ այն երեխաները որոնք ընդգրկված չեն նախադպրոցական կրթական ծառայություններում՝ հերթագրված են որևէ նախակրթարանում և նրանք հիմնականում 0-2 տարեկան երեխաներ են :Իսկ այն երեխաները ովքեր ընդգրկված չեն նախադպրոցական հաստատություններում, գյուղերում ապրող երեխաներն են,և չեն օգտվում նախադպրոցական որևէ ծառայություններից՝ որով խախտվում է յուրաքանչյուր երեխայի համար հասանելի կրթական ծառայություն ստանալու իրավունքը:

Ուսումնասիրության արդյունքում պարզեցինք ,որ նախադպրոցական հասակի հատուկ կարիք ունեցող երեխաների համար նախակրթարանների ֆիզիկական պայմանները անհամապատասխան են պայմանավորված գոյություն ունեցող նախակրթարանների հին շենքային պայմաններով:

Ծրագրի շրջանակում իրականացվեց ուսումնասիրությունը պարզեց Կապան քաղաքում, Կապանի խոշորացված համայնքի բնակավայրերում նախադպրոցական կրթության այլընտրանքային մոդելների ներդրման կարիքը, որի արդյունքում վերլուծվեցին գործողությամբ բացահայտված հնարավոր խնդիրները և ռիսկերը՝ սոցիոլոգիական հետազոտություններից և վերլուծություններից ստացված արդյունքներով:

Ծրագիրը կարևորում է 5-6 տարեկան երեխաների մանկապարտեզից դպրոց անցման հոգեբանական խնդիրը հաղթահարելու, դպրոցին հարմարվելու վարքի ձևավորման հարցը:

ՀՀ օրենքը , « ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» Հոդված 3. Երեխայի իրավունքները պաշտպանող մարմինները սահմանում է . **« Երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացնում են լիազորված պետական և տեղական ինքնակառավարման մարմինները: Պետությունը համապատասխան մարմինների միջոցով համագործակցում է երեխայի իրավունքների պաշտպանությանը նպաստող անձանց և հասարակական միավորումների հետ »:**

Հանձայն վերը նշված դրույթի՝ օգտագործելով ծրագրի ընթացքում ձեռք բերված փորձն ու ռեսուրսները առաջարկում ենք Կապան համայնքի 2018-2023թթ. հնգամյա զարգացման ծրագրում ներառել նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրում ըստ ստորև առանձնացված կետերի

1. Քարտեզագրում, երեխաների տվյալների բազայի պարբերաբար թարմացում/ սեռ, տարիք, հատուկ կարիք/ :
2. Էլեկտրոնային գրանցման համակարգի ներդրում , որը կնպաստի կոռուպցիոն ռիսկերի նվազացմանը:
3. Ձեռնարկել միջոցառումներ ապահովվելու համայնքի բոլոր երեխաների համար մատչելի նախադպրոցական կրթություն մոբիլ մանկապարտեզների ներդրման միջոցով :
4. Նախադպրոցական կրթության պարտադիր լինելուն ուղղված միջոցի ապահովում՝/ մոբիլ մանկապարտեզ/ աշխարհագրական դիրքից ելնելով տրանսպորտային ծախսի փոխհատուցում .այլընտրանքային մոդելների կիրառում /:
5. Յուրաքանչյուր նախակրթարանում հատուկ կարիքով երեխաների համար ստեղծել ֆիզիկական պայմաններ, ապահովել նեղ մասնագետներով /հատուկ մանկավարժ, լոգոպեդ , հոգեբան /:

6. *Մասնագետների ընտրության չափանիշների հստակեցում և կրեդիտային համակարգի ներդրում:*

*Կապանի համայնքապետարանի հետ աշխատանքը արդյունավետ էր և հաջողված: «Ծիածան» առաջնորդների կրթական կենտրոն ՀԿ պատր աստակամ է հետայսու շարունակել համագործակցությունը ի նպաստ համայնքի զարգացման:*

*«Ծիածան» ԱԿԿ ՀԿ նախագահ՝* *Սուսաննա Մարտիրոսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՀԱՍՏԱՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ARMENIA MARZ SYUNIK NON-GOVERNMENTAL ORGANIZATION
«ԾԻԱԾԱՆ» ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
"TSIATSAN" LEADER EDUCATION CENTER"
09422939